«ԱՊԱՐՏՈ» ՍՊԸ, ՀՎՀՀ՝ 02887382
Ամերիա բանկ Հ/Հ՝ 1570091449890200
ք.Երևան, Սայաթ-Նովա 19/1, տարածք 132
Կապ՝ (+374)55507090, էլ. փոստ՝ info@aparto.am
Վեբ կայք՝ www.aparto.am

Ձև 1

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(անշարժ գույքի գործակալական ծառայությունների մատուցման վերաբերյալ)

ՀՀ, քաղաք Երևան «____» _____ի, 20__ թվական

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ - _____ (անձնագիր/նույն. քարտ՝_____, տրված _____ թվականին, ____-ի կողմից, հաշվառման հասցե՝ _____ _____, էլեկտրոնային փոստի հասցե՝ _____).

ԿԱՏԱՐՈՂ - «ԱՊԱՐՏՈ» ՍՊԸ (գրանցված է ՀՀ-ում, պետական գրանցման համարը՝ 273.110.1306705, ՀՎՀՀ-ն՝ 02887382, գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, քաղաք Երևան, Սայաթ-Նովա 19/1-132, Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@aparto.am, հեռախոսահամար՝ +37455507090, բանկային հաշվեհամար՝ 157009144980200, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ) ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ալեքս Բաբաջանյանի.

Պատվիրատուն և Կատարողը միասին հանդես գալով որպես Կողմեր, կնքում են սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով կարգավորվում են Կատարողի կողմից Պատվիրատուին ծառայություններ մատուցվելու հետ կապված Կողմերի հարաբերությունները:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել անշարժ գույքի գործակալական ծառայություններ՝ համաձայն Պայմանագրի 2.2 կետի:

2.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից լրացուցիչ նշվող տվյալներով (գին, մակերես և այլն) իրականացնել անշարժ գույքի (այսուհետ նաև՝ Անշարժ գույք) որոնման աշխատանքներ, Պատվիրատուին ընձեռել Անշարժ գույքի գտնվելու վայր այցելելու և այն ուսումնասիրելու հնարավորություն՝ Պատվիրատուի կամ նրա հետ փոխկապակցված այլ անձի կողմից այն գնելու նպատակով, Անշարժ գույքի սեփականատիրոջ և Պատվիրատուի միջև գնման վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվելու դեպքում նաև կազմակերպել Անշարժ գույքի ձեռք բերման գործընթացը (այսուհետ նաև՝ Ծառայություններ):

2.3. Ծառայությունները յուրաքանչյուր Անշարժ գույքի մասով պատշաճ մատուցված են համարվում Անշարժ գույքը Պատվիրատուին ցուցադրելու վերաբերյալ սույն պայմանագրի թիվ 01 Հավելվածով ներկայացված փաստաթուղթը Կողմերի ստորագրելու պահից:

2.4. Կողմերն ընդունում են, որ Կատարողի կողմից Պատվիրատուին ցուցադրված որևէ (ցանկացած) Անշարժ գույքի վերաբերյալ Պատվիրատուի կամ նրա հետ փոխկապակցված անձի կամ նրանցից որևէ մեկի լիազորված անձի կողմից առուվաճառքի պայմանագիր կամ անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագիր կամ սեփականության իրավունքի փոխանցում ենթադրող այլ պայմանագիր (բոլորը միասին այսուհետ նաև՝ Օտարման պայմանագիր) կնքվելու դեպքում Օտարման պայմանագրի կնքվածությունը համարվում է օտարված Անշարժ գույքի մասով Պատվիրատուի կողմից Կատարողի

Ծառայությունների ընդունման ապացույց և Ծառայությունների մատուցման արդյունք (այսուհետ նաև՝ Ծառայության արդյունք), ինչը Պատվիրատուի համար առաջացնում է Կատարողին նրա վարձատրության գումարն ամբողջությամբ վճարելու պարտականություն, եթե նույնիսկ Կատարողը տեղեկացված և/կամ ներգրավված չի եղել Օտարման պայմանագրի համաձայնեցմանը և/կամ կնքմանը, և եթե նույնիսկ Օտարման պայմանագիրը կնքվել է սույն Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո:

2.5. Սույն պայմանագրի իմաստով՝ Պատվիրատուի հետ փոխկապակցված անձինք են համարվում Պատվիրատուի՝ ծնողը (նաև՝ որդեգրողը), զավակը (նաև՝ որդեգրված), պապը, տատը, թոռը, հորեղբայրը, մորեղբայրը, հորաքույրը, մորաքույրը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը, քույրը, վերջիններիս ամուսինները, զավակը (նաև՝ որդեգրված), ինչպես նաև՝ ամուսինը, նրա ծնողը (նաև՝ որդեգրողը), զավակը (նաև՝ որդեգրված), հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը, քույրը, նրանց զավակը (նաև՝ որդեգրված), ինչպես նաև՝ իրավաբանական անձը, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի բաժնետոմսը, բաժնեմասը կամ փայաբաժինը ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է սույն կետում նշված իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից որևէ մեկին, ինչպես նաև՝ իրավաբանական անձը, որը հիմնադրվել է սույն կետում նշված իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից որևէ մեկի կամ նրա մասնակցությամբ իրավաբանական անձի կողմից, ինչպես նաև՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձը, ով հանդիսանում է սույն կետում նշված իրավաբանական որևէ անձի հիմնադիր, մասնակից, բաժնետեր կամ անդամ, ինչպես նաև՝ ցանկացած այլ անձ, ով պայմանագրային կամ անձնական կամ այլ կապի մեջ է գտնվում Պատվիրատուի կամ սույն կետում նշված որևէ այլ անձի հետ և այդ պայմաններում Օտարման պայմանագիր է կնքում Կատարողի կողմից Պատվիրատուին ցուցադրված որևէ (ցանկացած) Անշարժ գույքի վերաբերյալ:

3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

3.1. Ծառայությունների արդյունքի արձանագրման յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուն պարտավոր է Կատարողին տվյալ Անշարժ գույքի մասով մատուցված Ծառայությունների համար Կատարողին որպես վարձատրություն վճարել Օտարման պայմանագրով (Ծառայությունների արդյունք) սահմանված գնի 2%-ը (երկու տոկոսը) կազմող գումարը ՀՀ դրամով: Օտարման պայմանագիրն անհատույց բնույթ ունենալու կամ շուկայականից ավելի քան 25% (քսանհինգ տոկոս) ցածր գնով կնքվելու դեպքում Կատարողի վարձատրությունը հաշվարկվում է նույն 2%-ով (երկու տոկոսով)՝ հաշվարկի համար հիմք ընդունելով Պատվիրատուի ստորագրած Հավելվածում տվյալ Անշարժ գույքի մասով նշված գինը:

3.2. Կատարողի վարձատրությունը բոլոր դեպքերում պետք է վճարվի Օտարման պայմանագիրը կնքվելուց հետո 4 (չորս) աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն պայմանագրում նշված բանկային հաշվին գումարի փոխանցման եղանակով:

3.3. Վճարման պարտավորության խախտման դեպքում Պատվիրատուն Կատարողին վերջինիս պահանջով վճարում է միանվագ տուգանք՝ ՀՀ ԿԲ սահմանած տարեկան տոկոսադրույքի քառապատիկի չափով, որը կիրառվում է վճարումը խախտված գումարի նկատմամբ, ինչպես նաև օրական տույժ՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

4.1. Պայմանագիրը կնքված է համարվում և ուժի մեջ է մտնում երկուստեք ստորագրվելու պահից: Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

4.2. Պայմանագիրը գործում է մինչև «____» _____ի թվականը ներառյալ: Ծառայությունները մատուցվում են Պայմանագրի գործողության ընթացքում:

4.3. Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն են կրում Պայմանագրի և/կամ ՀՀ օրենսդրության համաձայն:

4.4. Կողմերի վեճերը կարող են լուծվել բանակցությունների միջոցով, դատական կարգով կամ (և) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ եղանակներով: Վեճերի դատական քննության իրավասու դատարանն է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի համապատասխան դատարանը:

4.5. Պայմանագիրը կազմվել է իրավաբանական հավասար ուժ ունեցող 2 (երկու) հայալեզու օրինակից՝ մեկ օրինակ յուրաքանչյուր կողմի համար: Պայմանագրի ստորագրմամբ Կողմերը հավաստում են, որ ստացել են Պայմանագրի իրենց օրինակը՝ մյուս կողմից Պայմանագրով սահմանված կարգով կնքված վիճակում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ _____

ստորագրություն, անուն, ազգանուն

ԿԱՏԱՐՈՂ՝ «ԱՊԱՐՏՈ» ՍՊԸ /տնօրեն՝ Ալեքս Բաբաջանյան/ _____

ստորագրություն

Կ.Տ.

202_ թվականի _____ի ____-ին
_____-ի և «ԱՊԱՐՏՈ» ՍՊԸ-ի
միջև կնքված «անշարժ գույքի գործակալական ծառայությունների
մատուցման վերաբերյալ» պայմանագրի
ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 01

202_ թվականի _____ի ____-ին _____-ի և «ԱՊԱՐՏՈ» ՍՊԸ-ի միջև կնքվել է անշարժ գույքի գործակալական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր /N_____/: Սույն հավելվածի ստորագրմամբ Կողմերը հավաստում են Կատարողի կողմից ներքոնշյալ Անշարժ գույքը Պատվիրատուին ցուցադրման և դրա մասով Ծառայությունների պատշաճ մատուցման փաստը՝ սահմանելով անշարժ գույքի տվյալներն ու ցուցադրման օրը:

Հ/Հ	Պատվիրատուին ցուցադրված անշարժ գույքի հասցեն / անշարժ գույքի ID / գինը	Ցուցադրման ամսաթիվը և կատարողի անունից հանդես եկող անձի անունը, ազգանունը	Պատվիրատուի ստորագրությունը, անունը, ազգանունը
1.	_____ հասցե _____ _____ գույքի ID գույքի արժեք	_____ ամսաթիվ _____ անուն ազգանուն	_____ ստորագրություն _____ անուն ազգանուն
2.	_____ հասցե _____ _____ գույքի ID գույքի արժեք	_____ ամսաթիվ _____ անուն ազգանուն	_____ ստորագրություն _____ անուն ազգանուն
3.	_____ հասցե _____ _____ գույքի ID գույքի արժեք	_____ ամսաթիվ _____ անուն ազգանուն	_____ ստորագրություն _____ անուն ազգանուն
4.	_____ հասցե _____ _____ գույքի ID գույքի արժեք	_____ ամսաթիվ _____ անուն ազգանուն	_____ ստորագրություն _____ անուն ազգանուն
5.	_____ հասցե _____ _____ գույքի ID գույքի արժեք	_____ ամսաթիվ _____ անուն ազգանուն	_____ ստորագրություն _____ անուն ազգանուն

«ԱՊԱՐՏՈ» ՍՊԸ /տնօրեն՝ Ալեքս Բաբաջանյան/ _____

Ստորագրություն. Կ.Տ.